

Խառը թվերի գումարումը

Խառը թվերը գումարելու համար պետք է առանձին-առանձին գումարել նրանց ամբողջ մասերը և կոտորակային մասերը, ապա ստացված արդյունքները գումարել իրար:

Օրինակ՝

$$2\frac{3}{6} + 1\frac{2}{6} = (2+1) + (\frac{3}{6} + \frac{2}{6}) = 3 + \frac{5}{6} = 3\frac{5}{6}$$

$$3\frac{5}{16} + 4\frac{3}{4} = (3+4) + (\frac{5}{16} + \frac{3}{4}) = 7 + \frac{5+12}{16} = 7 + \frac{17}{16} = 7 + 1\frac{1}{16} = (7+1) + \frac{1}{16} = 8 + \frac{1}{16} = 8\frac{1}{16}$$

Առաջադրանքներ

- **Գումարեք խառը թվերը.**

Օրինակ՝ $2\frac{3}{6} + 1\frac{2}{6} = (2+1) + (\frac{3}{6} + \frac{2}{6}) = 3 + \frac{5}{6} = 3\frac{5}{6}$

$$12\frac{4}{6} + 7\frac{1}{6}$$

$$2\frac{5}{12} + 10\frac{5}{12}$$

$$3\frac{13}{24} + 1\frac{3}{4}$$

$$4\frac{3}{7} + 11\frac{2}{5}$$

$$12\frac{3}{25} + 6\frac{17}{100}$$

$$9\frac{2}{11} + 5\frac{2}{3}$$

$$20\frac{3}{7} + 1\frac{5}{14}$$

$$20\frac{1}{12} + 8\frac{7}{24}$$

- **Աստղանիշի փոխարեն ի՞նչ թիվ գրելու դեպքում կստացվի հավասարություն:**

Օրինակ՝

$$* -1\frac{2}{5} = 4\frac{6}{7},$$

$$* = 4\frac{6}{7} + 1\frac{2}{5} = (4+1) + (\frac{6}{7} + \frac{2}{5}) = 5 + (\frac{6 \cdot 5}{7 \cdot 5} + \frac{2 \cdot 7}{5 \cdot 7}) = 5 + (\frac{30}{35} + \frac{14}{35}) = 5 + \frac{30+14}{35} = 5 + \frac{44}{35} = 5\frac{44}{35}$$

$$* -1\frac{2}{5} = 4\frac{6}{7}$$

$$* -8\frac{3}{10} = 4\frac{3}{5}$$

- Հաշվիր $2\frac{2}{5}$ մ, $3\frac{3}{5}$ մ և $4\frac{2}{3}$ մ կողմերով եռանկյան պարագիծը: